

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՅՄԱՆ ԿԱՄԵԼ ԱԼՆԱՋՋԱՐ

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ԱՄԷ-ՈՒՍ**

**Ը.00.02.-«Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA

YEREVAN STATE UNIVERSITY

AYMAN KAMEL ALNAJJAR

**QUALITY MANAGEMENT PATHWAYS OF
CONSTRUCTION IN THE U.A.E**

The dissertation is submitted for the pursuing of scientific degree of Ph.D
in Economics in the field “Economics, Management of Economy and its Sectors” 08.00.02

RESUME

YEREVAN - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Վաղինակի Բաղդասարյան տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Տիգրան Սերյոժայի Մարտիրոսյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 13-ին ժամը 15⁰⁰ -ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2013 թվականի նոյեմբերի 12-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ա.Հ.Աբովյան

The Theme of Dissertation is Approved at the Yerevan State University of Architecture and Construction

Scientific supervisor:	Professor, Doctor in Economics Ashot Markosyan
Official opponents:	Professor, Doctor in Economics Vahram Bagdasaryan Ph.D in Economics, Docent Tigran Martirosyan
Leading organization:	Institute of Economics after M.Kotanyan, NAS RA

The defense of the dissertation will take place at 15⁰⁰, on December 13th, 2013, at the meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52, Abovyan str., Yerevan, 0009, Armenia

Dissertation is available at the library of the Yerevan State University.

The Resume is delivered at November 12th, 2013.

Scientific secretary, Prof., Dr.



A.H.Arakelyan

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Շինարարությունն իր զարգացման ընթացքում (հին ժամանակներից մինչև մեր օրերը) անցել է կատարելագործման երկար ճանապարհ: Այսօր այն բնորոշվում է ժամանակակից ճարտարապետության և քաղաքակրթության նվաճումներով, իրեն բնորոշ սոցիալական, քաղաքական, տնտեսական զարգացման տարրերով, որոնց հանդիպում ենք մեր ամենօրյա կյանքում:

Շինարարական արդյունաբերությունը համարվում է ծառայությունների ոլորտ, այն ստեղծում է ազգային եկամտի մոտ 10 տոկոսը և արդյունաբերության մեջ տարեկան ներդրվող ընդհանուր ֆոնդերի մոտ 50 տոկոսը: Շինարարական աշխատանքները տարբերվում են չափերով և արժեքով, շինարարական արդյունաբերությունը կարևորվում է մարդկության առօրյա կյանքում և աշխարհի տարբեր երկրների ազգային տնտեսություններում¹:

Համընդհանուր որակի կառավարումը (ՀՈԿ), արդի ժամանակաշրջանում, ժամանակակից կառավարման գիտության մեջ առավել կարևոր մաս է, և կարևոր դերակատարում ունի շինարարական ընկերությունների զարգացման գործում: Այն որոշակիացնում է ընկերության խնդիրները, և հիմքեր է ստեղծում այդ խնդիրները լուծելու համար, ներդաշնակվում է ընկերության ռազմավարության հետ:

ՀՈԿ-ը, նրա որդեգրումը և կիրառումը շինարարական ընկերությունների համար խիստ կարևոր մարտահրավեր է, այն հիմքերից մեկը, որը պետք է կիրառել ընկերությունների միջև վեճերի լուծման և նրանց գործունեության գնահատման ժամանակ, շուկայի առաջատար ընկերությունների շարքում ընկերության ներկա իրավիճակի և ապագա դիրքի գնահատման համար:

Հետազոտության կարևորությունը բխում է խնդրի բնույթից և միջազգային պրակտիկայում կիրառվող ՀՈԿ համակարգի ստանդարտների կիրառման անհրաժեշտությունից: ՀՈԿ-ը երկրների առաջընթացի առավել կարևոր այուններից է, հասկապես զարգացող երկրների համար որոնք ինտեգրվում են համաշխարհային տնտեսությանը և պետք է հետևեն զարգացման ընթացքին: Որակը ստեղծում է մի շարք առավելություններ և՛ անհատների և՛ հասարակության, ինչպես նաև նրանց ապահովության և բարեկեցության համար: Այստեղից էլ հետևում է «ՀՈԿ համակարգի» ներդրման և այն գործարկելու անհրաժեշտությունը, լրջորեն գնահատելու նրա դերը, արդյունավետ կիրառելու շինարարական ընկերությունների գործունեության ընթացքում:

¹ - Mohammed Jilali (1997) Master entitled Recent trends in construction contracts and project management engineering - Ain Shams University.

Հետազոտության ուսումնասիրվածության սաստիճակը: Հետազոտության հիմնական նպատակը և որակին առնչվող ուսումնասիրությունները նպատակամիտված են աջակցել շինարարական ընկերությունների ստորաբաժանումներին, հասկանալ որակի անհրաժեշտության պատճառները, և ջանքերն ուղղորդել շինարարության շղթայի բոլոր հանգույցներում որակի բարելավմանը, գույակցելով այն սպառողների հիմնական պահանջների բավարարման հետ և բարձրացնելով շինարարական ընկերությունների գործունեության արդյունավետությունը:

Անհրաժեշտ է հաշվի առնել ՀՈԿ-ի գիտական նորույթ լինելը, և որակի կառավարման ոլորտում հնարավոր փորձագիտական փորձի բացակայությունը: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել և հզորություններ ստեղծել շինարարական անձնակազմերի միջոցով որակի կառավարման գիտական սկզբունքները և մոտեցումները սերմանելու համար, և ապա առաջատար դերակատարում ունենալ ՀՈԿ-ի բարելավման գործում, որը կհանդիսանա ընկերության ստեղծման վաղ փուլերի առաջնահերթություններից մեկը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության հիմնական նպատակն է՝ օգնել շինարարական ընկերությունների մենեջմենթի ստորաբաժանումներին ըմբռնել ՀՈԿ-ի էությունը և ջանքերն ուղղել ՀՈԿ-ի բարելավմանը, այդ գործընթացը համապատասխանեցնելով ՀՈԿ-ի բոլոր պահանջներին և ընկերության գործունեության բնույթին:

Հետազոտության հիմնական խնդիրները: Մահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Ուսումնասիրել ՀՈԿ-ի իրավիճակը Արաբական Միացյալ Էմիրությունների, Դուբայի և Սաբաի շինարարության ոլորտում, և այն գործոնները որոնք ազդում են շինարարական ընկերությունների, կապալառուների և պատվիրատուների վրա այս համակարգը չկիրառելու ժամանակ: Վերջինը համեմատելով այն իրավիճակի հետ երբ համակարգը կիրառվում է, և բացահայտել դրա թերությունները և թույլ կողմերը:

- Փորձել կատարել որոշ առաջարկություններ, նախագծեր և խորհուրդներ որոնք կօգնեն բարելավելու ՀՈԿ-ը և դրա զարգացումը ԱՄԷ-ի շինարարության ոլորտում:

- Ներառել մենեջմենթի հետազոտության ընդհանուր սահմանումը, և քննել նախագծերի մենեջմենթը, ի լրացում մենեջմենթի հինգ գործառնությունների:

- Ներկայացնել ուսումնասիրված ոլորտում որակի սահմանումը և ընդհանուր հայեցակարգը, կառուցապատման և շինարարական նախագծերի յուրահատուկ բնույթը: Որոշակիացնել ՀՈԿ խնդիրները, հիմնական սկզբունքները շինարարական արդյունաբերությունում և շինարարությունում:

- Ցույց տալ շինարարությունում և շինարարական ընկերություններում ՀՈԿ կարևորությունը:

- Ուսումնասիրել որակի իրավիճակը շինարարական արդյունաբերությունում և շինարարությունում՝ համակարգի մանրագնին հետազոտման միջոցով և շինարարական ծրագրերում ու շինարարությունում որակի վերահսկման և կառավարման հաս-

տատված առանձնահատկություններին համապատասխան: Հաշվի առնել շինարարության զարգացման բազմախնդիր տեսակները և փուլերը:

- Որոշել և ճշգրտել այն համընդհանուր ստանդարտները որոնցով կառավարվում է ՀՈԿ գործընթացը:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտ են ԱՄԷ-ում շինարարությամբ և կառուցապատմամբ զբաղվող շինարարական ընկերությունները: Այս ընկերություններից ուշադրությունը կենտրոնացվել է Դուբայի և Սարժայի ընկերությունների վրա, նկատի ունենալով, որ շինարարական օբյեկտները տեղաբաշխված են ԱՄԷ-ում, և հատկապես Դուբայում ու Սարժայում: Հետազոտությունում ընդգրկված են այն ընկերությունները, որոնք գործունեություն են ծավալել շինարարության, բնակարանային շինարարության և շինարարության տարբեր փուլերում դասակարգված խմբերում: Հետազոտության առարկան տնտեսական հարաբերությունների այն ամբողջությունն ու մեխանիզմներն են, որոնք առնչվում են ՀՈԿ-ի ուսումնասիրության օբյեկտներին:

Հետազոտության տեսալեզողական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության մեթոդը հիմնված է վերլուծական մոտեցման, վիճակագրական տվյալների համեմատության և դրանց ամփոփումների վրա, այդ իսկ պատճառով որպես համակարգված հետազոտման հիմք որոշակիացված են հետևյալ մեթոդաբանական քայլերը:

Քայլ առաջին. տեսական հիմքը՝ մենեջմենթի և դրա հինգ գործառնությունների սահմանում: Այս փուլում քննարկվում են շինարարության ծրագրի կառավարումը, որակի վերահսկումը և հայեցակարգը, որոշակիացվում են ՀՈԿ վերահսկման մեթոդները:

Քայլ երկրորդ. վերլուծություններ և հետևություններ՝ կիրառվել է նկարագրական հետազոտություն, քանի որ այն վերհանում է վերլուծության մեջ և մեկնաբանություններում ընդգրկված իրադարձությունները ու օբյեկտները, հանգեցնում է իրավիճակի ճշտմանն ու կատարելագործմանն ուղղված օգտակար եզրահանգումների:

Քայլ երրորդ. փորձնական կիրառում իրավիճակի հետազոտման միջոցով՝ այստեղ ընդգրկվում են մի խումբ շինարարական ընկերություններ, որոնց միջոցով տեղեկատվության և փաստացի տվյալների վերլուծություն է կատարվում օգտվելով ուսումնասիրվող սկզբնաղբյուրներից, ուժեղացվում են դիտարկումները, զննումները, տեսանելի են դարձվում տարբեր աշխատանքների իրական վիճակը վերհանելու համար տարբեր գործոնների միջև պատահական կապերը և հարաբերությունները:

Քայլ չորրորդ. հետազոտության եզրակացությունները ընդգրկում են կատարված աշխատանքի առավել կարևոր եզրահանգումները և առաջարկությունները:

Այս հետազոտության խնդիրները կարևորված են մի շարք այլ հետազոտություններում, հաշվետվություններում, ռազմավարություններում և տարբեր գիտական ուսումնասիրություններում: ԱՄԷ-ում, և, հատկապես Դուբայում և Սարժայում, բացակայում է վերլուծական տեղեկատվությունը կամ անբավարար են վիճակագրական տվյալները, որոնք հեղինակը կարող էր ձեռք բերել շինարարական ընկերությունների ՀՈԿ համակարգերի և դրանց կիրառման մասին: Օրինակ, ԱՄԷ-ում ներկայացվում է, որ այս ընկերությունները հիմնականում հիմնված են անհատների վրա, իսկ դրանց սեփականատերերը չունեն անհրաժեշտ գիտական որակավորումներ: Բացառություն են կազմում առանձին ընկերություններ, որոնք ունեն գիտական և տեխնիկական

անհրաժեշտ որակավորումներ: Այսպիսով, հեղինակը հետազոտությունում փորձել է առավել ջանասիրաբար դիտարկել, նկարագրել և վերլուծել այն ընկերությունները և գործոնները, որոնք պետք է ապահովեն ընկերություններում ՀՈԿ կիրառելու համար:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները: Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն են.

-Բացահայտվել է, որ շինարարական նախագծերում կապալառուի ընտրության պիսալը հիմնված է առավելապես ֆինանսական գնահատման վրա, անտեսելով տեխնիկական գնահատումը:

-Ուսումնասիրելով որակի ապահովման մարմնի վերահսկողական գործառնությունը, պարզվել է, որ այն հիմնվում է միայն վերջնական որոշ փորձարկումների վրա՝ հանձնման փաստաթղթեր ձևակերպելիս, ուստի առաջարկել է որակի վերահսկողությունը և բոլոր փորձարկումները նախատեսել շինարարության նախագծերի համապատասխան բաժնում և դրանք իրականացնել նախագծի իրագործման ողջ ընթացքում:

-Հիմնավորվել է, որ շինարարության և կառուցապատման ոլորտի ընկերություններին իրազեկումը վստահություն կներշնչի նրանց և կօգնի կիրառել ՀՈԿ, այդ նպատակով համակենտրոնացնել ուժերը և արմատական փոփոխություններ կատարել առաջադրված թիրախներին հասնելու համար: ՀՈԿ-ը որպես համակարգ հանգեցնում է որակի բարձրացմանը իր բազմաթիվ օգուտներով, և եթե նման մոտեցման կիրառումը ընկալի ոլորտի յուրաքանչյուր աշխատակից և կիրառի ապա այն կարող է դառնալ արդյունավետ համակարգի միջուկ: Մշակվել է միջոցառումների ծրագիր, որի կիրառումը ՀՈԿ-ը շինարարության ոլորտի աշխատակիցներին և տնօրեններին ընկալելի կդարձի, որպեսզի նրանց ստեղծած արտադրանքը համապատասխանի ՀՈԿ-ի պահանջներին:

-Շինարարության և կառուցապատման ոլորտում գործող ընկերությունների արդյունավետությունը բարձրացնելու համար առաջարկվել է, որ այդ ընկերությունները պետք է համակենտրոնացնեն ուժերը և ստեղծեն մասնագիտացված ՀՈԿ, որը համաձայնեցված կգործի մնացած մենեջմենթների հետ ընկերությունների նպատակներին հասնելու ճանապարհին:

-Հիմնավորվել է, որ ՀՈԿ-ը տեղեկացվածության և իմացության ընդհանուր մակարդակը համակարգող գիտելիքների և փորձի ամբողջություն լինելով, ոլորտի ընկերությունների երիտասարդ տարիքի հետ զուգակցելով, կիրառելով գիտության և տեխնիկայի վերջին նվաճումները դրական լիցքեր կհաղորդի ԱՄԷ-ի շինարարական կազմակերպություններին բարձրացնելու իրենց արտադրանքի որակը և մրցունակությունը շուկայում:

Գիտական արդյունքների գործնական փորձարկումը: Հետազոտության արդյունքները ներկայումս կիրառվում են և կիրառելի կլինեն ԱՄԷ-ի շինարարական մենեջմենթի համակարգում և շինարարական գործընթացում ընդգրկված ընկերությունների կողմից գործող և նոր նախագծվող նախագծերի կենսագործման ողջ ժամանակահատվածում:

Հետազոտության արդյունքների փորձարկումները և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում, իսկ հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի երեք գիտական հոդվածներում:

Հետազոտության ծավալը ու կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը հիմնված է առաջադրված նպատակի և խնդիրների լուծման տրամաբանության վրա, և քայլ առ քայլ աշխատության առանձին գլուխներում ու ենթավերնագրերում ուսումնասիրվում ու վերհանվում են միջանկյալ և վերջնական արդյունքները: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 175 էջի վրա, օգտագործվել է 104 անվանում գրականություն:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը և հրատապությունը, ներկայացված է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, հակիրճ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը:

Ատենախոսության արագին՝ «Նախագծերի մենեջմենթ – որակ – համընդհանուր որակ» գլխում ուսումնասիրվել և ներկայացվել են «մենեջմենթ», «նախագծի մենեջմենթ», «որակ» և «համընդհանուր որակ» հասկացությունների սահմանումները, դրանց տնտեսագիտական բովանդակությունը, և մենեջմենթի հինգ գործառույթները, կանոնակարգման գործընթացի հինգ քայլերը, որակի պատմական զարգացումը և էվոլյուցիան, որակի միջազգային չափանիշները և ստանդարտները, ՀՈԿ-ի կիրառման փուլերը, նորմատիվային հիմքերի մատրիցան. ՀՈԿ ինքնագնահատման գործիքները, սահմանափակումները, բուրգը, օգուտները, բարելավման շրջապատույտը, ռազմավարական պլանավորումը և այլն:

Մենեջմենթը անհատների և այլ ռեսուրսների միջոցով կազմակերպական նպատակների իրականացումն է²: Հեղինակի կողմից ընդունելի, մենեջմենթի սահմանման համաձայն այն նպատակների իրագործմանը հասնելու հինգ վարչարարական գործառույթների ամբողջություն է: Մենեջմենթի հինգ գործառույթներն են՝ պլանավորումը, կազմակերպումը, անձնակազմի կառավարումը, ուղղորդումը և վերահսկումը³:

Մենեջմենթը գիտության ուսումնասիրության առարկա է, որի նպատակն է ունենալ բարձրորակ մարդկային ռեսուրս, ունակ գիտականորեն ղեկավարել նախագծերը բոլոր ոլորտներում, երաշխավորել այդ նախագծերի հաջողությունն և արդյունավետությունը⁴:

Որակի սահմանման փորձերի արդյունքում ամրագրվել են հետևյալ երկուսը⁵


² - www.homekw.com/bet/archive/index.php/t-1037.html

³ - Henri Fayol (Industrial Management and sheet 1918).

⁴ - Project Management to Dr. Abdul Salam Zidane - Damascus University Faculty of Information Technology .

⁵ - Managements Quality for Construction projects Hosny Abdel-Hady H.(1994).

Հեղինակը քննարկել է համընդհանուր լիարժեք որակի հայեցակարգը⁶: Շատ ընկերություններ արտադրում են առանց թերությունների (այսինքն թերությունները= 0), բայց ընկերության որակը դեռ կաղում է, քանի որ կան այլ գործառույթներ և ստորաբաժանումներ, որոնք դեռ բարելավման կարիք ունեն: Այսինքն այդ ընկերությունները այլ ընկերությունների նման ունեն ցածր որակ: Որակը ընկերության յուրաքանչյուր անհատի պատասխանատվությունն է: ՀՈԿ-ը պատկերավոր կարելի է ներկայացնել անձրևանոցի տեսքով, որի ներքո ընդգրկված են որակի բազմաթիվ նախաձեռնություններ և պարտականություններ, որոնք պետք է կառավարվեն, ներառյալ վիճակագրական գործընթացի հսկումը (SPC) և «Taguchi» մեթոդները (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՈԿ-ը և նրա կապը որակի այլ դրույթների հետ⁷

2000թ.-ի ISO 9000-ի համապատասխան, որակը սահմանվում է որպես ստանդարտների ամբողջություն «արտադրանքի (կամ գործունեության կամ գործընթացի, կառույցի, կամ ընկերության կամ անհատի) բնութագրերի խումբ, որոնք բավարարում են պահանջները»⁸:

Որակի ֆեդերալ կառույցը սահմանում է ՀՈԿ-ը որպես «ամբողջական կարգավորող մոտեցում հաճախորդի պահանջները և սպասումները բավարարելու համար»⁹

⁶ - Shafer . scott M & meredth . jack R” operations management a process approach with spreadsheets” 1st ed .john wiley & sons inc 1998 p83

⁷ - <http://www.arab-eng.org/vb/login.php?do=login>

⁸ - Iso. 9000 .2000 QMS Fundamentals and Vocabulary.

⁹ - Total Quality Management Concepts and Applications Dr. Mahfouz Ahmed Joudah 2009.

Վերին մենջմենթի պատասխանատվություն (1)	Գերազանցության գաղափարի վերահսկում (2)	Հաճախորդի բավարարվածությունն ստեղծելու սխեման (3)	Ռեսուրսների ներգրավում (4)	Շարունակական ուսուցում (5)	Աշխատակիցների ներգրավում (6)	Խթանների կիրառում (7)	Գործիքների կիրառում (8)
<p align="center">1</p> <p align="center">Որակի վերահսկման ավանդական մոտեցում: Նախնական փորձաքննությունը կիրառվում է որպես գործիք, թերությունները վերահսկելու, բայց ոչ կանխելու համար: Վիճակագրական գործընթացի վերահսկման գործիքը կիրառվում է որպես օրինակ, ինչպես նաև առանձնացվում են այլ գործիքներ: Բարձր որակ բարձր գին: Որակի վերահսկումը առկա է միայն արտադրական տեղամասերում: Խոտանի կրճատում և վերահսկում:</p>							
<p align="center">2</p> <p>Երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակների միջև հավասարակշռվածություն</p> <p>Կազմակերպության Խորհրդատվական խորհրդի ինժեներ</p> <p>Հաճախորդները որոշակիացված են, լավ տեղեկացված հարյուրի</p> <p>Հարյուրի մասնակախորհրդի իրականացվելու են համընդհանուր որակի կառավարման նպատակով և սկսվում է մասնակախորհրդի թվի կրճատում</p> <p>Արդյունավետ ծրագրերի օգտագործում աշխատողների առաջարկությունները ընտրվելու համար</p> <p>Ներկայացվում է գաղափարներ Տնօրենի կողմից և խրախուսվում է հարցեր տալ և ապա որոշումներ կառայցնել</p> <p>Ուսուցման, վերապատրաստման ծրագրի մշակում</p> <p>Արտադրության մեջ վիճակագրական գործընթացի վերահսկման գործիքի կիրառում</p>							
<p align="center">3</p> <p>Կան արդյոք հատկացված համապատասխան վիճակներ և բավարար ժամանակ շարունակական ուսուցման/վերապատրաստման և զարգացման համար</p> <p>Հիմնվում և օգտագործվում է ՀՈԿ –ին աջակցող խանակարգ</p> <p>Հաճախորդի հետադարձ արձագանքը օգտագործել որոշումների կայացման ժամանակ</p> <p>Ամփոփական մասնակցություն ռեսուրսների մասին գիտելիքների ուսուցման համաձայն ռեսուրսների ստանդարտների</p> <p>Տնօրենի կողմից շարունակաբար ներկայացվող խնդիրներ, առաջարկների կազմում և որոշումների կայացում</p> <p>Ուսուցման և վերապատրաստման ծրագրեր</p> <p>Մրակի բացառություններն ուղղված հարցումներ անհատական և խրախուսման չափանիշներով</p> <p>Վիճակագրական գործընթացի վերահսկման կիրառում՝ հավաքությունները և տարբերությունները կրճատելու նպատակով</p>							
<p align="center">4</p> <p>Գենտրոնմանայլ հասնակարգի կատարելագործման վրա</p> <p>Բոլոր ստորաբաժանումներում ներդրակել կատարելագործված աշխատանքային թիմեր</p> <p>Հաճախորդների գործունեությունն բարելավմանն ուղղված պայքարը արևմտական կարքացիոն է</p> <p>Արդյունավետ մասնակախորհրդի հանդեպ կիրառել ՀՈԿ համեցակարգը</p> <p>Վերին մենջմենթը ընկալում և կիրառում է ՀՈԿ համեցակարգը</p> <p>Տնօրենը սահմանում է եզրագծեր և ապա խնդրում է խմբիկ կայացնելու որոշում</p> <p>Ավելի շատ խթաններ և անհատական բուժումներ</p> <p>Վիճակագրության օպտիմիզացված կիրառում</p>							

պէ՛ս ճշտել կատարելագործման առկայությունը: Եվ երկրորդը, ինչպէ՛ս ճշտել՝ ճիշտ ուղի՞ն վ՛ են ընթանում ՀՈԿ աշխատանքները, թե՛ ոչ: Աղյուսակ 1-ում ներկայացված է նորմատիվային մատրիցան՝ այն ամփոփ գործոնները, որոնք ներագրում են համընդհանուր դրակին հասնելու վրա: Աղյուսակը ցույց է տալիս որակի 8 գործոնները՝ վերին մենեջմենթի պատասխանատվություն, գերազանցության գաղափարի վերահսկում և այլն, որոնք ներդրվել ու կիրառվում են ընկերությունում: Այս 8 գործոններից յուրաքանչյուրը կարող է կիրառվել ընկերությունում որակի ստեղծման և ապահովման համար, և գնահատվում է՝ 1-5 միավորներով(խմբերով), որտեղ 5 միավորը կամ 5-երորդ խումբը ամբողջացված ՀՈԿ-ն է:

ՀՈԿ-ի կիրարկման անհաջողությունների պատճառներն են.

- վերին մենեջմենթի պատասխանատվության պակասը,
- փոփոխությունների հանդեպ աշխատակիցների վախը,
- ստորաբաժանման, ընկերության և նրանց մշակույթի փոփոխության հայեցակարգի ձախողումը,

- ՀՈԿ կիրարկման ծախսերի և ժամանակի կեղծ սպասումները,
- շատ թե քիչ սխալ վիճակագրական մեթոդների օգտագործումը,
- ստորաբաժանման կամ ընկերության կենտրոնացման մեթոդների ոչ համահունչ լինելը արտադրական համակարգի հետ և/կամ անհատներին,

• համակարգի վրա խիստ և առանձնահատուկ կենտրոնացված գործիքների օգտագործումը,

- ՀՈԿ համակարգից արդյունքների արագ ստացման սպասումները,
- ՀՈԿ կիրարկման համար սխալ ընտրված ժամանակը,

• ձեռնարկության կամ ընկերության կողմից անհրաժեշտ ջանքերի կիրառման ձախողումը,

• մենեջմենթի կողմից անհատների նվաճումների խրախուսման և պարգևատրման գործընթացի ձախողումը,

- արդյունավետ հաղորդակցման համակարգի բացակայությունը,
- աննշան խնդիրների շուրջ աշխատանքային թիմերի գերզբաղեցումը,
- տեխնոլոգիաների և սարքավորումների հետ կապված խնդիրները:

Համընդհանուր որակի կառավարման հիմնական մտավոր նախադրյալներն են.


• փոփոխությունները ընդունել որպես իրողություն և անհրաժեշտություն, և աշխատել դրանց ուղղությամբ,

• ընկերությունը պետք է ընկալի առողջ աշխատանքային միջավայրի առկայությունը որպես անհրաժեշտ և կարևոր պայման, քանի որ նման միջավայրում աշխատակիցները աշխատում են բարձր արտադրողականությամբ, և աշխատանքից բավարարվածությունը լինում է բարձր,

• արդյունավետ փոփոխությունների համար պետք է տեղադրել ժամանակակից տեխնոլոգիա,

• գերազանցության հասնելու համար դրական մրցակցության սկզբունքները պետք է ընդունել որպես կարևոր և անհրաժեշտ փաստ,

- հաճախորդի կարևորությունը պետք է հստակ գիտակցել, կայուն վստահություն ձևավորել, նրա հանդեպ ջերմ վերաբերմունք ստեղծել, ինչպես նաև համագործակցել և գոհացնել նրան,
- խիստ կարևորել է ընկերության ռազմավարական պլանավորումը,
- լիարժեք հավատալ, որ մարդը ընկերության հաջողության և նույնիսկ ընկերության գերազանցության ամենաուժեղ և առավել կարևոր հիմքն է,
- ըմբռնել, որ մենեջմենթի հաջողությունները և ձախողումները խիստ կապակցված են շուկայական մեխանիզմների հետ,
- ընկալել օպտիմալ ներդրումների կարևորությունը ցանկացած էներգիայի, ռեսուրսների համար, և հավաքագրել ուժերը գերազանցության հասնելու նպատակի շուրջ՝ հիմնվելով ընկերության և միջոցների հնարավորությունների լիարժեք օգտագործման վրա,



Գծապատկեր 2. ՀՈԿ-ը ըստ Կանոյի բուրգի ¹¹

- ընկալել ժամանակի մենեջմենթի կարևորությունը հիմնական մատակարար ընտրելիս, և հիմնվել դրա վրա օգուտներ և առավելություններ ստեղծելու համար,
 - ընկալել մյուսների հետ փոխկախվածության և ինտեգրման կարևորությունը, ձգտել ստեղծել ռազմավարական պլաններ (անգամ մրցակիցների հետ) դրական արդյունքներ ստանալու համար,
 - հեռու մնալ անհատական և տարանջատվածության տրամաբանությունից, ներմուծել կոլեկտիվ գործելակերպի հայեցակարգ, կառուցել փոխկապված և ինտերակտիվ համակարգեր ու ցանցեր,
 - մերժել ըստ դասական մենեջմենթի կազմակերպության սկզբունքները և պահանջները, և պատրաստ լինել ընդունել հայեցակարգեր և տեսակետներ, որոնք կարող են խելամիտ թվալ կամ տրամաբանորեն նոր լինեն¹²:
- ՀՈԿ բուրգը՝ Կանոյի բուրգը, բաղկացած է հիերարխիայի երեք աստիճաններից կամ երեք մակարդակներից¹³

¹¹ - forum.ramsat.net/showthread.php.
¹² - <http://benasla.arabblogs.com/archive/2007/4/194872.html>
¹³ - <http://www.arab-eng.org/vb/t24704-5.html> 5

ՀՈԿ-ը համեմատելով ավանդական մենեջմենթի հետ հեղինակը բացահայտել է ավանդական մենեջմենթի հենասյուները և ՀՈԿ-ի հիմնական տարբերությունները, որոնք հակիրճ ներկայացվում են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ավանդական մենեջմենթի և ՀՈԿ-ի հիմնական տարբերությունները¹⁴

Մենեջմենթի Համեմատություն	Ավանդական	Համընդհանուր որակի կառավարում (ՀՈԿ)
Հիմնական խնդիրը	Կարճաժամկետ շահույթներ	Հաճախորդների ակնկալիքների բավարարում
Անձնակազմը	Ռեսուրսը թանկ արժե	Ռազմավարությունից դուրս է
Որակը	Որակը կախված է ծախսերից	Որակը ստեղծում է շահույթ
Մենեջմենթի կիզակետը	Արդյունքները	Գործողությունները (կատարելագործված)
Մեթոդը	Կրճատել ծախսերը	Բարելավել որակը (պահպանել և ավելացնել հաճախորդների թիվը)
Իրականացման ձևը	Անհատական	Կոլեկտիվ գործունեություն

ՀՈԿ կիրարկման հիմնական խնդիրներն են ընկերություններում բարելավել արտադրանքի/ծառայությունների որակը ծախսերի, ժամանակի, ներդրված ջանքերի կրճատման միջոցով, որի արդյունքում կբարելավվի հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակը և կբավարարվեն նրանց սպասումները¹⁵:

ՀՈԿ գործիքները: Ցանկացած ընկերություն որտեղ ցանկանում են կիրառել ՀՈԿ-ը, պետք է ունենա յուրահատուկ ընթացակարգեր, պարզ և ճշգրիտ գործիքներ գործընթացի բարելավման համար, պետք է ճշգրտի որակի բարելավման գործընթացի հիմնական քայլերը և հաջողված գործիքներ կիրառի այդ քայլերը միմյանց միացնելու համար: Այդպիսին կարող է լինել գործընթացի բարելավման շրջապտույտը «ՀՈԿ կիրարկման գործիքները- ՀՈԿ ռազմավարական պլանավորումը- ինչպես օգտագործել գործիքների համախումբը - ՀՈԿ-ի մեջ օգտագործվող վիճակագրական մեթոդները»:

ՀՈԿ-ի և ISO-ի տարբերությունները և նրանց միջև կապը տեսանելի դարձնելու համար, նրանց առավել կարևոր տարբերությունները ամփոփված են Աղյուսակ 3-ում:

Վերը նշվածից ելնելով հեղինակը եզրակացնում է, որ դրանք լրացնում են միմյանց և, հետևաբար, չեն հակադրվում և հակասում միմյանց:

Ատենախոսության երկրորդ

¹⁴ - Integrated Methodology for Total Quality Management – Omar Wasfi Aqeily.

¹⁵ - Comprehensive entrance to Total Quality Management – Hamed Abdullah Al Saqqaf.

ՀՈԿ	(ISO 9000)
Որակի ստորաբաժանում, որը համագործակցում է ամբողջական համակարգի հետ	Փաստաթղթավորման վրա հիմնված որակի առանձնահատկությունների համակարգ
Ներկայացնում է որակի կառավարումը	Դիտարկում է մատակարարի որակի կառավարումը հաճախորդի տեսանկյունից
Շահագրգռված է շարունակական բարելավումներ կատարել	Պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում և շարունակաբար թարմացնում ՀՈԿ ծրագրով իրականացվող բարեփոխումներին համապատասխան
Հետաքրքրված է մարդու չափորոշիչներով և սոցիալական ինտեգրմամբ, հայեցակարգը առավել ամբողջականացված է	Կիզակետվում է մեթոդների և գործընթացների տեխնիկական չափորոշիչների վրա
Ներառում է բոլոր հատվածները, ստորաբաժանումները, բաժինները և աշխատանքային խմբերը	Կարող է կիրարկվել որոշ հատվածներում կամ ստորաբաժանումներում, բաժիններում, պարտադիր չէ գործարկել ողջ ընկերությունում որպես ամբողջություն
Պատասխանատու են բոլոր հատվածները, ստորաբաժանումները, բաժինները և աշխատանքային խմբերը	Պատասխանատու է որակի վերահսկման ստորաբաժանումը

• Ֆունկցիոնալությունը. արդյոք շենքը ծառայում է այն նպատակին, որի համար կառուցվել է:

• Տնտեսական արժեքը. արդյոք շենքը արժեքավոր է այնքան, որքան դրամական միջոցներ ծախսվել են նրա կառուցման վրա:

• Կյանքի տևողությունը. արդյոք շենքը ամուր է և դիմացկուն ժամանակի մեջ:

• Գեղազիտությունը. արդյոք շենքը համապատասխանում է շրջակա շինությունների համայնապատկերին:

• Ամորտիզացիան և հագեցվածությունը. արդյոք այն լավ հագեցված և լավ շահագործվող շինություն է:


• Կայունությունը. արդյոք այն էկո-շինություն է:

ՀՈԿ-ը իրականացվում է համաձայն երկու սկզբունքների՝ հաճախորդի բավարարվածության և շարունակական բարելավումների:

Հաճախորդի բավարարվածության սկզբունքին համաձայն կառուցապատման և շինարարական արդյունաբերության հիմնական գործառնությունը հաճախորդի պահանջմունքների բավարարումն է նախագծերի իրականացման, շինություններ կառուցելու, ծառայություններ մատուցելու միջոցով: Գործընթացի յուրաքանչյուր կողմը իրականացնում է երեք դերակատարում՝ մատակարարի, իրականացնողի և հաճախորդի: Այս եռադեր մոտեցումը առկա է շինարարության բոլոր մակարդակներում և փուլերում, այն ներկայացված է գծապատկեր 3 -ում:


Շարունակական բարելավումներ սկզբունքը թելադրում է, որ

¹⁶ - Source: Ahmed Sayed Mustafa Page 66.



Գծապատկեր 3. Շտաղեր մտնեցումը¹⁷

թյուն ունեցող բարելավումները արտադրական գործընթացի վերահսկման միջոցով:
 -Շինարարական գործընթացներում ջանքերը ուղղորդել և կենտրոնացնել՝ ստեղծարարության և նորամուծությունների միջոցով, տեխնոլոգիական առաջընթացի ապահովման ուղղությամբ¹⁸:



Գծապատկեր 4. «ՈՆՈՒԱԿ ցիկլ»¹⁹


Յուրաքանչյուր գործընթացի կիրարկման ընթացքում և մի փուլից մյուսին անցնելիս, հաճախորդի պահանջմունքների և ընկերության նոր պահանջմունքների միջև առաջա-

¹⁷ - Magazine of Damascus University of Engineering Science – volume 22 – first issue – 2006.
¹⁸ - Engineer Qosai Saleh's Master thesis – under supervision of Eng./Dr.Nassr el-Din Khairallah, with participation of Eng./Dr. Muhammad al-Gelali.
¹⁹ - Magazine of Damascus University of Engineering Science – volume 22 – first issue – 2006.

նում է անդունդ, որը նման իրավիճակում պետք է լրացնել կիրառելով «ՈՆՊԻԱԿ ցիկլ» վերլուծությամբ (պլանավորել, կատարել, ստուգել, գործել): «ՈՆՊԻԱԿ ցիկլ»-ը, որը ուսումնասիրվել և ներկայացվել է ատենախոսության II բաժնում, գործառնությունների համախումբ է, նախատեսված մեթոդների շարունակական բարելավումները գործարկելու համար, և գործում է ուշադրությունը բևեռելով սխալների և թերությունների կանխարգելմանը: Սա իրականացվում է խնդիրների հիմնական պատճառները հարթելու և չափորոշիչների շարունակական ստուգման ու մոդիֆիկացման միջոցով:

Ինչպես նշվել է II բաժնում, «ՈՆՊԻԱԿ ցիկլ» մեթոդը ունի չորս բաղադրիչ մասեր, որոնք ամեն անգամ և շարունակաբար կրկնվում են: Այս ցիկլը պետք է կիրարկվի յուրաքանչյուր գործընթացի համար, ինչպես ներկայացված է գծապատկեր 4 -ում:

Նախորդ ութ քայլերը պետք է կատարվեն երկու պահանջվող արդյունքներին հասնելու և համոզվելու համար, որ մեթոդների և գործընթացների բարելավումները ավելացել են, և նախկինում ձեռք բերված բարելավումները պահպանվում են: Սա «ՈՆՊԻԱԿ ցիկլ» հայեցակարգի երկակի նպատակն է, որը ներկայացված է գծապատկեր 5 -ում:



Գծապատկեր 5. Երկնպատակ «ՈՆՊԻԱԿ ցիկլ»²⁰

Կառուցապատման նախագծերում ՀՈԿ-ի կիրարկման համակարգված սխեման ներկայացված է գծապատկեր 6-ում:

Համաձայն շինարարական և կառուցապատման նախագծերի բնույթի շինարարական և կառուցապատման նախագծերը անցնում են մի շարք փուլեր՝ սկսած գաղափարից, մինչև նախագծի ավարտը և շահագործման հանձնելը: Նախագծի իրականացման սկզբունքների և տեխնիկական ստանդարտների ապահովման և նրա օպտիմալ շահագործման համար ՀՈԿ հիմնաքարերը և սկզբունքները պետք է կիրառվեն վեց փուլերով, որոնք էական և կարևոր են նախագծի համար.

- Որոշումների կայացման,
- Նախագծման և հետազոտման,
- Պայմանագրի և կապալառուի ընտրության,
- Իրականացման,
- Ամբողջացման՝ գործնական համաձայնեցումների,
- Կառավարման, գործարկման, ներդրումների:

Համընդհանուր որակի պլանավորումը, ապահովումը և վերահսկումը պահանջվում է իրականացնել նախագծի բոլոր փուլերում:

²⁰ - Magazine of Damascus University of Engineering Science – volume 22 – first issue – 2006.

Որակի մենեջմենթի ծախսերը քննարկելիս հեղինակն անդրադարձել է ծախսերի սահմանման, թաքնված ծախսերի և ծախսերի կրճատման խնդիրներին: Հաճախ, արտադրանքը ունի բարձր որակ և լավ համբավ շուկայում, բայց նման արտադրանքի մարքեթինգը դժվար է իրականացնել արտադրության բարձր ծախսերի պատճառով: Արտադրանքը պետք է բավարարի հաճախորդի պահանջները (նախագծի սեփականատեր, ներդրող), թեև դա բավարար չէ մենեջմենթի արդյունավետության մասին դատադրություններ կատարելու համար: Պետք է նաև հաշվի առնել նախագծի վերջնական արժեքը, և նաև, կառուցապատման և ՀՈՎ ծախսերը, որոնք հաշվարկվում, վերլուծվում և վերահսկվում են պլանավորման և մշտական ստուգադիտարկումների միջոցով:

ՀՈՎ-ի ծախսերի սահմանումը թելադրում է, որ արտադրանքի թերությունների (նախագծման, կառուցապատման և շինարարության ընթացքում) կանխումը, կամ նման թերությունների բացահայտումը և վերանորոգումը ծախսատար է:²³

ՀՈՎ-ի ծախսերը բնական են այն առումով, որ դրանք ընդգրկում են հիմնականում որակյալ նախագծման, ներքին և արտաքին հարդարանքների ձախողումների ծախսերը, բաժնետերերի հավելյալ պահանջները և վերջապես այլընտրանքային ծախսերը: Այս բոլոր ծախսերը կազմում են շինարարական արդյունաբերության ոլորտի ընկերությունների հասույթի մոտ 15-20 տոկոսը, որոշներում՝ մինչև 30 տոկոսը, իսկ ծառայությունների ոլորտում՝ մոտ 50 տոկոսը:

ՀՈՎ-ի ծախսերը բաժանվում են չորս հիմնական տեսակների՝ ներքին հարդարանքի ձախողման, արտաքին հարդարանքի ձախողման, գնահատման և կանխման ծախսեր: Ծախսերը նախատեսված են կանխելու համար այնպիսի սխալները ինչպիսիք են՝ որակի պլանավորումը, սարքավորումների փորձարկումը, ներքին հարդարանքի բարեխիղճ կատարումը, աշխատակիցների վերապատրաստումը խուսափելու համար հանձնարարականների կատարման ընթացքում ծագած սխալներից, և նրանց գիտելիքները ավելացնելու համար:

Ժամանակակից չափանիշներով կարևորվում են ոչ միայն ներքին հարդարանքի, այլ նաև արտաքին սխալների կանխում: Արտաքին հարդարանքի սխալները հանգեցնում են պահպանման ծախսերի և հաճախորդների (բաժնետերերի) կորստի, իսկ նախագծերը շահագործման հանձնելուց հետո դրանք անցնում են նրանց կառավարմանը և հայտնվում են շուկայում: Ներքին հարդարանքը բաժնետերերին, հատկապես, տեսանելի չի լինում:

ՀՈՎ-ի թաքնված ծախսերը ծագում են օգտագործվող համակարգերի անարդյունավետությունից, օրինակ՝ էներգիայի կորուստը կամ գերաճախսը, հավելուրդ նյութերի պահեստավորումը, ռեսուրսների ոչ օպտիմալ օգտագործումը (ինչպես օրինակ, զգոնության համար մեքենա-սարքավորումների և անհատների լրացուցիչ առկայությունը)²⁴: Նման ծախսերը պետք է վերացնել կամ նվազեցնել կիրառելով, օրինակ, շինարարական գործընթացների վերահսկման վիճակագրական եղանակներ:

Ծախսերի նվազեցումը խիստ կարևորվում է:

²³ - <http://knolgoogle.com/k->

²⁴ - <http://khusain.kau.edu.sa>

հայտնի գրքի, որակը ազատ է՝ «Quality is free»: Այս գրքում որակի ծախսերի խնդրի շուրջ ներկայացված ուսումնասիրությունների հիման վրա հեղինակը եզրահանգել է, որ իրականացման միակ ցուցիչը որակի ծախսն է: Նա նաև վստահեցնում է, որ բարձր որակը հանգեցնում է ծախսերի նվազեցման, հետևաբար, նաև ավելացնում է ընկերության շահույթները:

ՀՈԿ-ի հիմնական խնդիրները կառուցապատման և շինարարության մեջ, հեղինակի կարծիքով, հետևյալներն են.

-Ընկերության վարչական և կառավարման վերին օղակի մարմինների պատասխանատվությունը և ներդրված ջանքերը բավարար չեն հաջող ՀՈԿ կիրարկելու համար:

-Նախագծի աշխատակազմի, և նաև վարչարարական վերին օղակների և աշխատակիցների միջև առկա է անհրաժեշտ մակարդակի հաղորդակցման և համակարգման պակաս (սեփականատեր, նախագծող, կապալառու, վերադաս):

-Առկա է աշխատանքի արդյունավետության թերացում թույլ վերապատրաստումների հետևանքով, որը հանգեցնում է աշխատանքի ձախողման և թերացնում է ՀՈԿ-ի ակտիվ գործարկումը:

-Թերի է ընդհանուր կանոններով և տեխնիկական պայմաններով ապահովվածությունը, որոնց պետք է հետևել ողջ գործընթացի ընթացքում:

-Նախագծի աշխատողները բավարար ուշադրություն չեն դարձնում ՀՈԿ-ին:

-Շինարարական նախագծերում առկա են աշխատանքային ծավալների փոփոխություններ, կապված ազգային տնտեսության կայունության, մատակարարվող նյութերի, բնակարանային միավորների առաջարկի և պահանջարկի փոփոխության հետ:

-ՀՈԿ ակտիվ ներդրման համար պլանավորումը թերի է, ձգտումը՝ չարտահայտված:

-Շինարարության աշխատանքային շուկա մուտքը դյուրին է, որի արդյունքում ուշադրություն չեն դարձնում պահանջվող պայմանների կատարմանը, և չի ներդրվում անհրաժեշտ ներուժ պահանջվող որակին հասնելու համար:

-Շինարարական գործընթացի մասնակից կողմերի (սեփականատեր, նախագծող, կապալառու, վերադաս) միջև ՀՈԿ պարտականությունների բաշխումը հստակ չէ:

-ՀՈԿ կիրարկումը ձախողվում է, օրենսդրությունն և համակարգը լիարժեք չեն:

-Շինարարական արդյունաբերության որոշ մասնակիցների միջև թույլ են բարոյական նորմերը (ձեռնարկատերեր, խորհրդատուներ, փորձարկողներ և փորձաքննողներ):

-ՀՈԿ հայեցակարգերը, հասկացողությունները և գործիքները անտեսվում են կամ դրանք ճիշտ չեն օգտագործվում:

-Մարքավորումների և ժամանակակից ինժեներական տեխնոլոգիաների շուրջ մասնագետները իրազեկված չեն կամ ճիշտ չեն օգտագործվում:

-Նախագծերի պլանները և տեխնիկական պայմանները աղեկվատ նախապատրաստված չեն նախքան պայմանագրերում դրանք ներառելը, շինարարական նախագծերը իրականացնող կապալառուները արդյունավետ չեն գործում:

Ատենախոսության երրորդ՝ «Տեղամասի հետազոտում՝ վիճակագրական գործընթացներ և տվյալների վերլուծություն» գլխում ուսումնասիրվել, վերլուծվել և ներկայացվել են շինարարական տեղամաս այցի ընթացքում հեղինակի կողմից մշակված հարցաթերթերի լրացումը, դիտարկումները, տեղամասի հետազոտությունները, հավաքագրված տվյալների վերլուծությունը և վերլուծական գնահատումները, գրառումները, կառուցապատման և շինարարական ընկերությունների ՀՈԿ տվյալների և ուսումնասիրությունների վերլուծությունները, թերությունների, բացերի վերհանումը և եզրահանգումները, որոնք կարևոր գործնական նշանակություն ունեն կառուցապատման և շինարարության ոլորտում:

Նման հետազոտությունը միակ գործիքն է, որի վրա հիմնվելով հեղինակը տեղեկատվություն է հավաքել և դա կատարվել է հաջորդական քայլերով²⁵:

Հեղինակը գրառումները կատարել է միայն ԱՄԷ ինժեներական խորհրդատվական գրասենյակում աշխատելու ավելի քան քսան տարիների ընթացքում, դրանից առաջ նա աշխատել է Միրայում՝ նույն ոլորտում:

Տեղամասեր այցերը և հարցումները կատարվել են շինարարական ընկերություններում կամ կառավարության ստորաբաժանումների աշխատակիցների հետ, ովքեր աշխատել են շինարարության և կառուցապատման ոլորտներում:

